ծախսերի միջև առկա է անհամապատասխանություն: Մասնավորապես՝
շինարարական աշխատանքների հանրագումարը 9-րդ կետում կազմում է 102712.2
հազ. դրամ, իսկ 10-րդ կետում նախատեսված է 60538.8 հազ. դրամ, կահույքի ձեռք
բերման ծախսերը 9-րդ կետում կազմում է 11804.7 հազ. դրամ, իսկ 10-րդ կետում՝
6957.5 հազ. դրամ, գործուղման ծախսերը 10-րդ կետում կազմում է 9594.9 հազ.
դրամ, իսկ 10-րդ կետում՝ 5655.5 հազ. դրամ և այլն: Ելնելով վերոգրյալից՝
անհրաժեշտ եմ համարում ներկայացնել համապատասխան պարզաբանումներ:

Միաժամանակ՝ առաջարկում եմ կից ներկայացված որոշման նախագծի
վերնագրում նշել «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության»
ծրագրի անվանումը:

Ա. Ալավերդյան

Կատարող՝ անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/3119-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

2/16

0201 ք. Աշտարակ, Հանրապետության 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51 E-mail marzpetaran@Aragatsotn.region.am
0201 Դ. Аштарак, Агратетутян 4, Тел /факс (+374 232) 3 22 51 E-mail marzpetaran@Aragatsotn.region.am
0201 Ե. Ashtarak, Hanrapetutyun 4, Tel /Fax (+374 232) 3 22 51 E-mail marzpetaran@Aragatsotn.region.am

3.02.11 02/10.1/248-11

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր- Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 15.15.1/1050-11 գրությունով ներկայացված ԿԲԾՀՀ ծրագիրը առաջարկում ենք որակել
բարեգործական:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

Կատարող՝ Ա.Դարբինյան
Հեռ՝ /0232/ 3-32-50

110/2668-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРМАВИРА

ԱՐՄԱՎԻՐԻ

ՄԱՐԶՊԵՏ

2/16

<< 2 >> 02 2011թ.

N 02/08.1/274-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանում քննարկվել է «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, Ինկ.»
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող
«Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագրի մասին» ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման
նախագիծը և տրվել է հավանություն:

Դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՎԱՇԿԱՆՅԱՆ

Կատարող՝ Գ. Սայադյան
Հեռախոս՝ 0237/22035

112/2534-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2/16

ք. Գավառ, Գ. Լուսավորչի փ. 36
հեռ. /0264/2-34-31

N 01/15/349-11

07 02 2011թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊՐՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ
/Ձեր՝ 2011-01-31 թիվ 15/15.1/1050-11/

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը հավանություն է տալիս „Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2003 թվականի հունվարի 16-ի թիվ N66-Ն որոշմամբ հաստատված „Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.“ կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող “Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության” ծրագրի մասին” որոշման նախագծին:

Հարգանքով՝

 Ս. ՊՈՂՈՍՅԱՆ

113/3062-11

Վ. Մնացականյան
0-264-2-38-75

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բավանդականությունը	Հիմնավորում
ՀՀ պոլարարտության նախարարություն - 7.02.11, N 01/565-11	
1. Ծրագրի 7-րդ կետում նշել բարեգործություն ստացողներին	1. Կցված է ծրագրի լրանձակված տարբերակը
ՀՀ ֆինանսների նախարարություն - 3.02.11 N 3/3.8-1/857-11	
1. Դատվածները վճարովի են թե ոչ	1. Կցված է ծրագրի լրանձակված տարբերակը (դատվածները անվճար են)
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե - 18.11.10, N ԱԱ/3-4/2658-10	
1. Անհամապատասխանություն կա 9-րդ և 10-րդ կետերում նախատեսված ծրագրային ծախսերի միջև	1. Կցված է ծրագրի լրանձակված տարբերակը

2/16


ጌሊክሊዋኮሾ

-11

2/17

[illegible]

Law



09-րդ փետրվարի 2011 թ.

«ԿԱՂ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐ»

1	Ծրագրի նպատակը	Ապահովել վաղ մանկության զարգացման որակյալ ծառայությունների հասանելիությունը մինչև 6 տարեկան երեխաներին և նրանց պատրաստվածությունը դպրոցին:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից:
3	Բարեգործը	«Լինսի հիմնադրամ», The Lincy Foundation, 150 South Rodeo Drive, Suite 250, Beverly Hills, California 90212, USA
4	Ծրագրի կատարողը	«Մելվ դը Չիլդրեն ֆեդերեյշն ինկ.» կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղ Հասցեն՝ Երևան, Ագաթանգեղոսի 2ա, ՀՎՀՀ 01519077
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ, Լոռու մարզի Սպիտակ, Վանաձոր և Տավուշի մարզի Ղիփջան համայնքներ: Բնագավառը՝ նախադպրոցական կրթություն և վաղ մանկության զարգացում:
6	Ծրագրի բյուջեն («Լինսի հիմնադրամ»-ի մասով)	121,666,545 դրամ (կամ 333,333 ԱՄՆ դոլար՝ հաշված 365 փոխարժեքով)

7	Բարեգործություն ստացողը	Բարեգործության ստացողներ են հանդիսանում Մայիսակ, Վանաձոր և Դիլիջան համայնքները, նշված քաղաքների 0-6 տարեկան երեխաները, քնտրված մանկապարտեզներն ու դրանց անձնակազմը: Մասնավորապես ընտրվել են Մայիսակի թիվ 1, Վանաձորի թիվ 2 և Դիլիջանի թիվ 12 մանկապարտեզները, որոնք ունեն գործող եղբայրներին համապատասխան սեյմադինվաճության մակարդակ, ունեն վերանորոգման կարիք և երեխաների ամենաբարձր հաճախելիություն: Վերջիններս հանդիսանում են 2-րդ և 3-րդ կարգի կենտրոններ, որոնք անհրաժեշտ է վերանորոգել: Վերջիններս հանդիսանում են 2-րդ և 3-րդ կարգի կենտրոններ և գտնվում են քաղաքապետարանների ենթակայության տակ:																																																	
8	Ծրագրի իրականացման տևողությունը	2011 թվականի հունվարի 1-ից մինչև 2012 թվականի մարտի 31-ը:																																																	
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ամփոփումը և ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման նպատակն է հասնելու համար նախատեսվում է իրականացնել թվով 3 մանկապարտեզների վերանորոգում և կանխավորում, ինչպես նաև կազմակերպել անվճար դասընթացներ 2-րդ և 3-րդ կարգի երեխաների համար (5-6 տարեկան երեխաների համար նախադպրոցական դասընթացներ, երեխաների զարգացման վերաբերյալ ծնողական կրթություն, մանկապարտեզների աշխատակազմի վերապատրաստում): Ընդամենը ըստ եռամսյակների պլանավորվում է իրականացնել հետևյալ ծախսերը. <table><tr><th>Եռամսյակ</th><th>(լուծում) միջոցառումների ընդհանուր արժեքը</th><th>(լուծում) ընդհանուր արժեքը</th><th>(լուծում) ընդհանուր արժեքը</th><th>(լուծում) ընդհանուր արժեքը</th><th>(լուծում) ընդհանուր արժեքը</th><th>(լուծում) ընդհանուր արժեքը</th></tr><tr><td>I - 2011</td><td>5,686.9</td><td></td><td></td><td>3,695.6</td><td>370.7</td><td>9,753.2</td></tr><tr><td>II - 2011</td><td>5,686.9</td><td></td><td></td><td>22,173.8</td><td>370.7</td><td>28,231.4</td></tr><tr><td>III - 2011</td><td>5,686.9</td><td>730.0</td><td>25,869.3</td><td></td><td>370.7</td><td>32,856.9</td></tr><tr><td>IV - 2011</td><td>5,686.9</td><td>730.0</td><td>22,173.8</td><td></td><td>988.6</td><td>32,316.8</td></tr><tr><td>I - 2012</td><td>5,686.9</td><td></td><td></td><td></td><td>370.7</td><td>8,795.1</td></tr><tr><td>Ընդամենը</td><td>28,434.5</td><td>1,460.0</td><td>73,912.5</td><td>5,475.0</td><td>2,471.4</td><td>111,753.4</td></tr></table>	Եռամսյակ	(լուծում) միջոցառումների ընդհանուր արժեքը	(լուծում) ընդհանուր արժեքը	(լուծում) ընդհանուր արժեքը	(լուծում) ընդհանուր արժեքը	(լուծում) ընդհանուր արժեքը	(լուծում) ընդհանուր արժեքը	I - 2011	5,686.9			3,695.6	370.7	9,753.2	II - 2011	5,686.9			22,173.8	370.7	28,231.4	III - 2011	5,686.9	730.0	25,869.3		370.7	32,856.9	IV - 2011	5,686.9	730.0	22,173.8		988.6	32,316.8	I - 2012	5,686.9				370.7	8,795.1	Ընդամենը	28,434.5	1,460.0	73,912.5	5,475.0	2,471.4	111,753.4
Եռամսյակ	(լուծում) միջոցառումների ընդհանուր արժեքը	(լուծում) ընդհանուր արժեքը	(լուծում) ընդհանուր արժեքը	(լուծում) ընդհանուր արժեքը	(լուծում) ընդհանուր արժեքը	(լուծում) ընդհանուր արժեքը																																													
I - 2011	5,686.9			3,695.6	370.7	9,753.2																																													
II - 2011	5,686.9			22,173.8	370.7	28,231.4																																													
III - 2011	5,686.9	730.0	25,869.3		370.7	32,856.9																																													
IV - 2011	5,686.9	730.0	22,173.8		988.6	32,316.8																																													
I - 2012	5,686.9				370.7	8,795.1																																													
Ընդամենը	28,434.5	1,460.0	73,912.5	5,475.0	2,471.4	111,753.4																																													

2

Գործող

Գործող

Գործող

Գործող

10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	• Շինարարական նյութերի ձեռքբերում և ծառայությունների մատուցում - 73,912,500 դր., • Կահույքի և պարագաների ձեռքբերում - 5,475,000 դր., • Ծրագրային աշխատակազմի աշխատավարձեր (ներառյալ ծրագրի ղեկավար, ծրագրի պատասխանատու, շինարարության համակարգող, մոնիթորինգի և գնահատման պատասխանատու, հասարակայնության հետ կապերի պատասխանատու, գնումների պատասխանատու) - 28,434,500 դր. • Վերապատրաստման և կրթական դասընթացների կազմակերպում - 1,460,000 դր. • Գործուղման և տրանսպորտային ծախսեր (գործուղումներ վերապատրաստման նպատակով, փոխադրման ծառայությունների մատուցում) - 2,471,400 դր. • Սպասարկող աշխատակազմի աշխատավարձեր - 7,689,200 դր. • Օպերացիոն ծախսեր - 2,223,945 դր., ներառում է գրասենյակի վարձը, կոմունիկացիոն ծախսեր, գրենական պիտույքներ, սարքավորումների սպասարկման ծախսեր, բանկային ծախսեր:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Ծրագրի իրականացման ընթացքում ՓԵ-ն կհամագործակցի ՀՀ Տարածքային կառավարման և Կրթության և գիտության նախարարությունների, Մայիսակի, Վանաձորի և Դիլիջանի քաղաքապետարանների և տեղի մանկապարտեզների հետ:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման նպատակով վերահսկողությունն իրականացվում է «Մեյլ գր չիլդրեն ֆեդերեյշն», ինչպես նաև կազմակերպության, նշված նախարարությունների և տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան ծառայությունների կողմից և ընդգրկում է հետևյալ գործողությունները. • Շինարարական վերահսկողություն; • Ֆինանսական մոնիթորինգ; • Ազդեցություններ վերահսկողություն; • Մանկանկար զարգացումը հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	

2/12

3



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԵՏ

2/17

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

30211 № 3/3.8-1/860-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 31.01.11թ. N 15/15.1/1053-11 գրության՝ «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Վաղ մանկության զարգացում» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ ծրագրում նշված չէ թե շահառուները ինչ կարգով են օգտվելու դասընթացներից՝ վճարովի, թե անվճար:

Հարգանքով՝

Ա. Զանցուղազյան

034/2795-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

2/17

0078 Երևան, Հալաբյան 41 "», հեռ. 380389
Էլ. փոստ info@moj.am

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի պատասխան Ձեր 2011թ. հունվարի
31-ի 15/15.1/1053-11 թվակիր գրության

01/524-11
04.02.11

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան


«Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» կազմակերպության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Վաղ մանկության զարգացման» ծրագրի 8-րդ կետում «2010 թվականի մարտի 31-ը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «2011 թվականի մարտի 31-ը» բառերով:

Հարգանքով՝

Հ. ԹՈՎԱՄԱՅԱՆ

035/2850-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА
REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE
DEPUTY MINISTER

ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/02.2/795-11 " 4 02.11

2011թ.

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր՝ 31.01.2011թ. թիվ 15/15.1/1053-11 գրության, հայտնում ենք, որ
<<Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.>> կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
կողմից իրականացվող <<Վաղ մանկության զարգացում>> ծրագրի մասին>> որոշման
նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և
առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ս.ՄԿՐՏՅԱՆ

031/2935-11

Կատ.՝ Ս.Քեզարյան
Հեռ.՝ 524777



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 2/17

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

044/3-4/598-11
08.02.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 31.01.2011թ. թիվ 15/15.1/1053-11 գրությանը կից ներկայացված «Սեյվ դը
չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից
իրականացվող «Վաղ մանկության զարգացում» ծրագրի մասին» որոշման
նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերով նախատեսված ծրագրային
ծախսերի միջև առկա է անհամապատասխանություն: Մասնավորապես՝
շինարարական աշխատանքների գումարը 9-րդ կետում նշված է 99908.0 հազ.
դրամ, իսկ 10-րդ կետում նախատեսված է 73912.5 հազ. դրամ, կահույքի ձեռք
բերման ծախսերը 9-րդ կետում նշված է 7400.6 հազ. դրամ, իսկ 10-րդ կետում՝
5475.0 հազ. դրամ: Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ եմ համարում ներկայացնել
համապատասխան պարզաբանումներ:

Ա. Ալադերյան

044/3/20-11

Կատարող՝ անուղղակի հարկերի բաժին, հեռ. 594652



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

2/17

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-28-77

թիվ 101/104.3.2/466-11

« 03 » 02 2011 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 31.01.2011թ. թիվ 15/15.1/1053-11 գրությանը

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Կարևորում եմ «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից ՀՀ Լոռու մարզի Սպիտակ, Վանաձոր և ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքներում իրականացվող 121666545 դրամ արժողությամբ «Վաղ մանկության զարգացում» ծրագիրը, որը մեծ օգնություն է նախադպրոցական տարիքի երեխաներին:

Ձեմ առարկում այն որակել որպես բարեգործական:

ՄԱՐԶՊԵՏ Ա. ԲՈՂԱՐՅԱՆ

Ս. Բոլարյան

114/2783-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐԶՊԵՏ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ТАВУШСКАЯ ОБЛАСТЬ
ГУБЕРНАТОР

REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
GOVERNOR

2/17

4001, ՀՀ ք. Իջևան Սահմանադրության 1, РА, г. Иджеван Сагманадрутян 1, РА, Ijevan Sahmanadrutyann 1
հեռ.тел.phon. /0263/ 4-00-45, 3-23-56 Ֆաքս /факс, fax / /0263/ 4-00-45
E-mail: tavush@mta.gov.am Կայք WEB http://tavush.region.am

01/19.2/305-11
07.02.11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 31.01.2011թ. թիվ 15/15.1/1053-11 գրության կապակցությամբ հայտնում եմ, որ
„ Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ. „ կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող „ Վաղ մանկության զարգացում „, ծրագրի նախագիծը քննարկվել է Տավուշի մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում: Ծրագրի նկատմամբ դիտողություններ եւ առարկություններ չկան:

Գտնում եմ, որ այն կարելի է որակել բարեգործական:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

Ա. Գուլարյան

Կատարող՝ Ա. Մարկոսյան
հեռ. 0263-3-45-61

119/2968-11

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական քաղաքականության համաձայնագրում հանձնարարվում է «Այլ ղ ղ չիրեն քննարկել, ինչ» կազմակերպության մասնաճյուղի կողմից իրականացվող «Վար մանկության գարաջություն» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Հիմնավորում	
ՀՀ արդարադատության նախարարություն - 4.02.11, N 01/524-11	
1. Ծրագրի 8-րդ կետում «2010 թվականի մարտի 31-ը բառերով փոխարինել «2011 թվականի մարտի 31-ը» բառերով	1. Կցված է ծրագրի լրամշակված տարբերակը (դաշնակցություն)
1. Դաշնակցությունը վճարում են թե ոչ	ՀՀ ֆինանսների նախարարություն - 3.02.11 N 3/3.8-1/860-11
1. Անհամապատասխանություն կա	ՀՀ կառավարության անվտանգության վարչություն կա 9-րդ և 10-րդ կետերում
1. Նախատեսված ծրագրային ծախսերի միջև	ՀՀ կառավարության անվտանգության վարչություն կա 9-րդ և 10-րդ կետերում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

— 2011 թվականի N Ա —

«ՕՐՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՏԵ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹՓԱՏՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հունվարի 27-ի N 3.8-1/645-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հունվարի 18-ի N 142-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի հունվարի 19-ի N ՖԲ/Մարդմիջ-1/164-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հունվարի 20 -ի N ՀՂ/22/215-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի հունվարի 18-ի N 04/07.2/202-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 19-ի N ԱԱ/3-4/201-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության 2011 թվականի հունվարի 18-ի N 35/62 ու Երևանի քաղաքապետի 2011 թվականի հունվարի 24-ի N 100/1655 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակի «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից ՀՀ, քաղ. Երևան, առաջին եկամյան 6, ՀՀՀՀ՝ 02552842) 2011 թվականին իրականացվող՝ 68898728 դրամ ընդհանուր արժեքով «Օրրան»։ օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագիրը (կցվում է)։
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝
 - 1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հարավ» մասնաճյուղի հետ (ՀՀՀՀ՝ 01520882) 2008 թվականի օգոստոսի 14-ին կնքված N 263135 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 1521000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.
 - 2) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի «Կենտրոն» տեղամասի հետ (ՀՀՀՀ՝ 02500052) 2004 թվականի հունիսի 17-ին կնքված N 010309530 51/3162/4682 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1080000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.
 - 3) «ԿեԲ» ՍՊԸ-ի հետ (ՀՀՀՀ՝ 00027623) 2007 թվականի հունվարի 1-ին կնքված N DI-ORR-01/07 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում «Ինտերնետ»

ՆԱԽԱԳԻԾ

համակարգչային ցանցի ծառայությունների մատուցում՝ 420000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՀՀՀ՝ 01555351) 2006 թվականի հուլիսի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարում՝ 350000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Կենտրոն-մարդկություն» ՓԲԸ-ի հետ (ՀՀՀՀ՝ 01544673) 2010 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված N 4-263 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում կենցաղային աղբի հեռացման աշխատանքների իրականացում՝ 180000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Հայրուստագարդ» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՀՀՀ՝ 00046317) 2006 թվականի ապրիլի 10-ին կնքված N Ա-012.04.06.1231 պայմանագրում (2010 թվականի դեկտեմբերի 6-ին կնքված լրացուցիչ N Ա-012 1231 համաձայնագրում) նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 2810000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Էլ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՀՀՀ՝ 00930884) 2010 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված N Ե-243 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գազամատակարարման տեխնիկական սպասարկում՝ 118928 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Գրանթ Թորնթոն Լմի» ՍՊԸ-ի հետ (ՀՀՀՀ՝ 00040569) 2008 թվականի նոյեմբերի 11-ին կնքված N AT-AU-107 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գործունեության աուդիտի իրականացում՝ 2250000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ի հետ (ՀՀՀՀ՝ 02700232) 2008 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված պայմանագրում (2010 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված N 2 հավելվածում) նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում մթերքի մատակարարում՝ 19350000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Վալենտինա» ՀԶ» ՍՊԸ-ի հետ (ՀՀՀՀ՝ 0835704) 2010 թվականի դեկտեմբերի 3-ին կնքված N 9 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երեխաների այցելություն ջրաշխարհ՝ 320000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

11) «Տեխնիկական անվտանգություն ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ (ՀՀՀՀ՝ 01556354) 2010 թվականի դեկտեմբերի 3-ին կնքված N 2296 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գազի կաթսայի տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացում՝ 33800 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

12) «Ն-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՀՀՀ՝ 01551651) 2010 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված N 74556 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 600000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

13) «Դարյոն» ՍՊԸ-ի հետ (ՀՀՀՀ՝ 02541434) 2010 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված N 8 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ապրանքների մատակարարում՝ 1200000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2/18

3. Առաջարկել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն ու երևանի քաղաքապետին:

«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն
տեղից Արեւմտյան թաղամասի համայնքում



ԲԱՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻ


«ՕՐՐԱՆ» օգնության կարիքավոր ընտանիքներին

2011 թ.

1	Ծրագրի նպատակները	Օգնել ֆինանսական դժվար կացության մեջ հայտնված ընտանիքների երեխաներին և ծնողներին, որոնց շրջանում վերացել մուրացվածությունը, աջակցել աղքատության մեջ գտնվող ընտանիքներին, միայնակ ու կարիքավոր ծնողներին
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ հարկերի, տուրքերի, պարտավոր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելու:
3	Բարեգործը (բարեգործները)	ԱՄՆ-ում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն, Հովհաննիսյանների ընտանիք, Գրիգորյան բարեգործական հիմնադրամ /Ազգիալ, Տեղադր Գալինյան հիմնադրամ /ԱՄՆ/, VivaCell-MTS, Հանրք Բարեգործական
4	Ծրագրի կատարողը	«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն ՀՎՀՀ 02552842 Ստաֆին Եվդայան 6 Երևան, Հայաստանի Հանրապետություն Հեռ.՝ 53-51-67
5	Ծրագրի իրականացման վայրը (կայքերը), բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Երևան Սոցիալական բնագավառ
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն 68898728 (կաթսումուք միլիոն ութ հարյուր ինսումուք հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ
7	Բարեգործություն ստացողը	Ծրագիրը սկսել է գործել 2009թ. ապրիլի 19-ից, 16 երեխաներով և 27 ծնողներով: • 6-16 տարեկան 100 երեխա, ովքեր ապրում են սոցիալական ծայրամիջի դժկարգություններ ունեցող, մուրացվածության շնորհիվ ցտնկող ընտանիքներում: Սր շարք երեխաներ աշխատում և մուրում են փորցում: Երեխաներից մեծ մասը միակողմանի ծնողազուրկ են, հաշմանդամ, բամբակած կամ ազանաբերկված ծնողներ ունեն:

		51 թշվառատներ՝ 60 և ավելի բարձր տարիքի կանայք ու տղամարդիկ, ովքեր անտուն են և մուրում են փորցում, միայնակ են, անոնացած են և անժառանգ, I, II, III խմբերի հաշմանդամ են, ունեն ժառանգներ, սակայն լրացուցիչ աջակցություն չկապ կարիք ունեն: Շահառուների ընտրությունը կատարում է սոցիալական աշխատողը՝ նախապես մշակված չափանիշներով: Ցուրաբանյուր դեպք բնորոշվում է Օրրանի մասնագիտական խնդու, որի մեջ մտնում են Օրրանի սոցիալական աշխատողը, մանկավարժները, հոգեբանը, բժշկը և գործադիր տնօրենը: Շահառուների ընտրություն հայրցում Օրրանը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի տարբեր վարչական շրջաններ սոցիալական բաժինների, սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև: ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների կողմից կատարվող համագործակցությունների դեմ պայքարի բաժնի » են:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը սկսվել է 2009թ. ապրիլին և այն շարունակական է: Սույն ծրագիրը նախատեսված է 2011թ. հունվարի 1-ից մինչև 2011թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար: Այն կործի այնքան ժամանակ, որքան կազմակերպությունը հնարավորություն կունենա իրագործել իր առաքելությունը և այդ նպատակով կունենա ֆինանսական միջոցներ:
9	Միջոցառումների (ըստ փուլերի, եթե առկա) հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծախսով	Օրրան ԲՀ-Կ-ն Ստաֆին Եվդայան 6 հասցեում գտնվող իր եռահարկ կենտրոնում մուրացիկ, քառասունչորս և ծայրահեղ կարիքավոր ընտանիքների 100 երեխայի շարքից 6 օր մատուցում է տաք ճաշ և իրականացնում սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական և բժշկական ծառայություն: Շաբաթը 6 օր Օրրանը տաք նախաճաշ է մատուցում 51 միայնակ, կարիքավոր ծնողի և հաշմանդամների: 100 երեխայի և 51 թշվառատի ամենօրյա սնունդ - տարեկան կազմում է 23439637 դրամ - Բժշկական և հոգեբանական ծառայություններ - տարեկան 1999590 դրամ - Ատամնաբուժական ծառայություն-տարեկան 1679753 դրամ - Հագուստ և կոշիկ - տարեկան 4232672 դրամ - Նշագրության միջոցառումներ - տարեկան 6116390 դրամ - Պարգևատրական երեխաների տնային պարագայությունների կազմակերպում դպրոցից հեռու, շաբաթական 6 օր 100 երեխայի համար, զրեմական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսամքների ապահովում, և ծեսարկանական երեք

2/18



[illegible][illegible]

12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ	1. ՀՀ կառավարության բարեհործական ծրագրերի համակարգման համաձայնագրով 2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 3. ՀՀ առողջապահության նախարարություն 4. ՀՀ կրթության և գիտության նախարարություն 5. Երևանի բաղադաստարանի և Երևանի վարչական շրջանների սոցիալական վարչություններ 6. Տեղական ու միջազգային ՀԿ-ներ, որոնք աշխատում են ռիսկի խմբի երեխաների հետ 7. ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժին «Օրրանը» համագործակցում է նաև սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ՀՀԿ-ների հետ: • Եռամսյակային և տարեկան հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Համաձայնագրով • ամսեկան եւ եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում «Օրրան» ԲՀԿ-ի տնօրենների խորհրդին գույքագրումը և բաշխումը իրականացվում են «Օրրան» ԲՀԿ-ի գործադիր տնօրենի, հաշվապահի և սոցիալական աշխատողի, ինչպես նաև շահառուների ստորագրություններով ու անձնագրային տվյալներով • Եռամսյակային հաշվետվություններ ՀՀ կառավարության առջև ղեկավարող պետական Եկամուտների Կոմիտե • ֆինանսական աուդիտը իրականացվում է «Գրամբ Թորնթոն Անի» ՍՊԸ-ի կողմից
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	

2/18

Ծրագրի ղեկավար Ք. Մ. Արմինե Հովսեփյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

2/18

0010, Երևան, Մելիք-Աղայան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

27.01.11թ. № 3/3.8-1/645-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան 24.01.11թ. 001 գրության և իլյումն մեր 25.11.2011թ N 3/3.8-1/386-11 գրության՝ կապված <<Օրրան>> բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող <<Օգնություն կարիքավոր ընտանիքներին>> ծրագրի լրամշակված տարբերակի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Զանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան հեռ. 595-229

N034/2237-11
27.01.11թ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

2/18

N 142-11
18.01.11թ.

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385
էլ. փոստ molkhasyan@justice.am

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ
Պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Ի կապարումն ՀՀ կառավարության 2011թ. հունվարի
14-ի 15/15.4/222-11 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2011 թվականին իրականացվող ««ՕՐՐԱՆ» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագրի վերաբերյալ հայտնում ենք, որ՝

1. Ծրագրի 8-րդ կետում անհրաժեշտ է հստակ նշել ծրագրի իրականացման տևողությունը:

2. Ծրագրի 9-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է հստակ նշել, թե ինչ գույք է պետք ձեռք բերել, ինչպիսի ծառայություններ պետք է մատուցվեն:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերնագիրն անհրաժեշտ է լրացնել «ԾՐԱԳԻՐ» բառով:

Հարգանքով՝

Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

N 035/1019-11
18.01.11թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

2/18

« 19 » 01 2011 թ.

N 88/Ճարգործի-1/164-11

Ձեր 17-01-2011թ.
N 15/15.4/222-11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Քննարկելով ««Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2011 թվականի ընթացքում իրականացվող ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ ծրագիրը բարեգործական որակելու կապակցությամբ առաջարկություն և դիտողություն չունեն:

Հարգանքներով

Տ. Բերիկյան

Կատարող՝ Բարեգործական ծրագրերի
համակարգման բաժին
հեռ.525-893

N 040/1192-11
19.01.11թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱԴԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

2/12

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

20.01.11 N 77/22/215-11
Ձեր N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.01.2011թ. թիվ 15/15.4/222-10 գրության կապակցությամբ՝ «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2011 թվականին իրականացվող ծրագրի մասին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

???? ????????

Jan 20 2011 5:07 PM

Կապարող Ա.Մկրտչյան
հեռախոս 52 27 21

5020/1458-11
20.01.11թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

HEAD OF STAFF 2/12

ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Տեղ./Tel.: 52 66 02, ֆաքս/ֆакс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: headofstaff@edu.am, www.edu.am

N-04/072/202-11 18 01 2011

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր՝ 14.01.2011թ., N 15/15.4/222-11 գրության, հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2011 թվականին իրականացվող ծրագրի մասին՝ որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Մ.ՂԱԶԱՐՅԱՆ

Կար.՝ Ն.Մնացականյան
հեռ.՝ 524777

N031/1082-11
18.01.11թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 2/18

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

N 242/3-4/201-11
19.01.11թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.01.2011թ. թիվ 15/15.4/222-11 գրությանը կից ներկայացված «Օրրան»
բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2011 թվականի
ընթացքում իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական
որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Կառավարող՝ անուղղակի հարկերի բաժին, հեռ. 594652

N 044/1286-11
19.01.11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ 2/18

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ. 596-659, քարտուղարություն, հեռ. 596-125

N 35/62

«18» 01

2011թ.

Ձեր 15/15.4/222-11
14.01.11թ.

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ

Սիմոն Տեր-Սիմոնյանին


Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում քննարկվել է «Օրրան» բարեգործական
հասարակական կազմակերպության կողմից 2011 թվականին իրականացվող ծրագրի մասին»
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի կողմից ներկայացված որոշման նախագիծը, որի վերաբերյալ առաջարկություններ և
առաջարկություններ չկան:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ

Ա. ԱՄԱԳՍՅԱՆ

Կառավարող՝ Իրավական ապահովման վարչություն
Ա. Կարապետյան հեռ. 59-68-93





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երեւան 15, Արգիշտիի փողոց №1

№ 02/34-215 Կ

«21» 01 2011 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՕՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 14.01.2011թ. հ.15/15.4/222-11 գրության տեղեկացում եմ, որ Երևանի քաղաքապետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2011 թվականին իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագծը, որի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:


Հարգանքով՝

Կ. Արեճյան

Կ. ԱՐԵՅԱՆ

Կատ. Ռ. Ջաքարյան
հեռ. 51 41 79

103



Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Օրրան», օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում են, որ - Ծրագրի 8-րդ կետում անհրաժեշտ է հստակ նշել ծրագրի իրականացման տևողությունը: - Ծրագրի 9-րդ կետի վերաբերյալ հայտնում են, որ անհրաժեշտ է հստակ նշել, թե ինչ գույք է պետք ջեռք բերել, ինչպիսի ծառայություններ պետք է մատուցվեն: Միաժամանակ հայտնում են, որ վերնագիրն անհրաժեշտ է լրացնել «Ծրագիր» բառով:	Կազմակերպությունը ներկայացրել է ծրագրի լրանված տարբերակը:

2/18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

— փետրվարի 2011 թվականի N Մ- -Ա
քաղ. երևան

«ԱՌԴԱ» ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՇԻՐԱԿ» ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի -ի N 3/3.8-1/-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի փետրվարի -ի N-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի փետրվարի -ի N-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի -ի N ԱԱ/3-4/-11 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի -ի N եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Գյումրի, Մովսես Խորենացու 19, ՀՎՀՀ՝ 05531591) իրականացվող՝ 217.5 մլն դրամ ընդհանուր արժեքությամբ «Շիրակ» բժշկական ծառայություններ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2006 թվականի հունվարի 17-ին կնքված՝ N 410017049/488 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի ընթացքում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 350000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀայԴուսագալար» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2006 թվականի ապրիլի 10-ին կնքված՝ N 02204061492 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի ընթացքում բնական գազի մատակարարում՝ 880000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվա-

կանի հունվարի 8-ին կնքված՝ N 120648 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 420000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Շիրակ ջրմուկյոյոտի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05531223) 2010 թվականի հունվարի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 85000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին և Գյումրու քաղաքապետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն»
բարեգործական հիմնադրամի կողմից
2011 թվականի հունվարի 10-ին

Տնօրեն


Handwritten signature

Ա. Դարբինյան

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
«Շիրակ» բժշկական ծառայություններ»

2/19

1. Ծրագրի նպատակը	Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի սակավապահովված ընտանիքներին, ծնողազուրկ երեխաներին, մանկատներին, ծերանոցներին անվճար բուժապաստարկում, ատամնաբուժական, ակնաբուժական ծառայությունների մատուցում, դեղորայքի անվճար տրամադրում:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Բարեգործին խնայողություն և հարկային արտոնությունների տրամադրում
3. Բարեգործը	Ամերիկյան «Հայ ավետարանի առաքելություն» ոչ առևտրային կազմակերպություն, ԱՄՆ, ք. Փասադենա:
4. Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն բարեգործական հիմնադրամ, ք. Գյումրի, Մ. Խոդրենացի 19, ԴՎՀԴ՝ 05531591
5. Ծրագրի իրականացման վայրը և ընթացակարգը	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի: Առողջապահական, սոցիալական ոլորտ:
6. Ծրագրի բյուջեն	217.5 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի:
7. Բարեգործությունը ստացողը	Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի ծնողազուրկ երեխաներ, հաշմանդամներ և անապահովության «Փարոս» համակարգում ընդգրկված ընտանիքներ: Տարեկան սպասարկելու է շուրջ 1500 շահառու:
8. Ծրագրի իրականացման տևողությունը	01.01.2011թ.-31.12.2015թ.: Ծրագիրը շարունակական է: Այն իրականացվում է սկսած 2006 թվականից:
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ամիսաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Անվճար բուժ սպասարկում (էլեկտրաստիմուլյացիա, ուլտրաձայնային ախտորոշում, բիոքիմիական և կլինիկական լաբորատոր ծառայություններ)- 55.0 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի: Տարեկան 11 մլն դրամ ատամնաբուժական ծառայություններ՝ առանց ԱԱՀ-ի - 45.8 մլն դրամ: Տարեկան - 9.16 մլն դրամ ակնաբուժական ծառայություններ - 20 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի, Տարեկան 4.0 մլն դրամ Դեղորայքի անվճար տրամադրում՝ առանց ԱԱՀ-ի - 20.6 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի: Տարեկան - 4.12 մլն դրամ ԱՄՆ-ից բժշկական սարքավորումների և պարագաների ներմուծում 40.0 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի, Տարեկան 8 մլն. դրամ Կենտրոնի ոչ բժշկական անձնակազմի աշխատավարձ - 6.0 մլն դրամ. Տարեկան-1.2մլն դրամ Գրասենյակային ծախսեր -1.0 մլն դրամ, տարեկան-0.2մլն դրամ Կոմունալ ծախսեր-29.1մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի, տարեկան-5.82մլն.դրամ
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Բժշկական պարագաների ձեռք բերում 15 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի Դեղորայքի ձեռք բերում 20.6 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի Բժշկական սարքավորումների և պարագաների ներմուծում 40.0 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կենտրոնի ոչ բժշկական անձնակազմի աշխատավարձ 6.0 մլն դրամ գրասենյակային ծախսեր-1.0մլն.դրամ Կոմունալ ծախսեր-29.1մլն դրամ
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների հետ	ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Շիրակի մարզպետարան:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ ԿԲԾՀՀ ներկայացվող հաշվետվությունների և «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն բարեգործական հիմնադրամի հաշվապահության խորհրդի անդամների պարբերական այցելությունների միջոցով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ - ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

2/19

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

08.02.2011թ. № 3/3.8-1/1029-11

Ձեռք №

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 02.02.11թ. N 15/15.6/1208-11 գրության՝ <<ԱՌԴԱ>> բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող <<Շիրակի բժշկական ծառայություններ>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ ծրագրի 9-րդ կետում միջոցառումների ֆինանսական ծավալի հանրագումարը չի համապատասխանում 6-րդ կետում նշված ծրագրի բյուջեին, իսկ 10-րդ կետում ամրագրված չէ ներմուծվող բեռները:

Հարգանքով՝

Handwritten signature

Ա. Զանդուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան հեռ. 595-229

034/3248-11
08.02.2011թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

2/19

0078 Երևան, Հայաստան 41 Կ, հեռ. 380389
Էլ. փոստ info@moj.am

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

№ 01/14-3.2-64/591-11
08.02.2011թ.

Ի պատասխան Ձեր 2011թ. փետրվարի
2-ի 15/15.6/1208-11 թվակիր գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

«ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական
հիմնադրամի կողմից իրականացվող ««Շիրակի» բժշկական ծառայություններ»
բարեգործական ծրագրի 7-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է
հստակ նշել բարեգործություն ստացողներին:

Հարգանքով՝

Հ. ԹՈՎԱՄԱՅԱՆ

Կատ.՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Մարտիրոսյան հեռ.380.227

035/3226-11
08.02.2011թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

2/19

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
Էլ. փոստ minister@moh.am

08.02.2011թ. N ԿԲ/22/696-11

Ձեր N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 02.02.2011թ. թիվ 15/15.6/1208-11 գրության կապակցությամբ՝ «ԱՌԴԱ»
առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամի կողմից
իրականացվող ««Շիրակի» բժշկական ծառայություններ» ծրագրի մասին» Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ
առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում
դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Հ. ԹՈՎԱՅԱՆ

Կարգող Ա. Մկրտչյան
հեռախոս 52 27 21

020/3226-11
08.02.2011թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 2/19

0015, Երևան, Մ. Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

№ 166/3-4/584-11
07.02.2011թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահի
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 02.02.2011թ. թիվ 15/15.6/1208-11 գրությանը կից ներկայացված «ԱՌԴԱ»
առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամի կողմից
իրականացվող «Շիրակի բժշկական ծառայություններ» ծրագրի մասին» որոշման
նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված ծրագրի 9-րդ կետի միջոցառումների համար
նախատեսված ծախսերի հանրագումարը կազմում է 217.5 մլն դրամ, որը
զգալիորեն գերազանցում է ծրագրի 6-րդ կետում նշված ընդհանուր բյուջեն: Ելնելով
վերոգրյալից՝ առաջարկում եմ ճշտել նշված արժեքային
անհամապատասխանությունը:

Ա. ԱղաՎերդյան

Կատ.՝ անուղղակի հարկերի բաժին, հեռ. 594652

044/3101-11
07.02.2011թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ 2/19

<< 4 >> 02 2011թ.
N: 01/420-11

ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր՝ 02.02.2011թ.

թիվ՝ 15/15.6/1208-11

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Շիրակի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական
հիմնադրամի կողմից իրականացվող «Շիրակի բժշկական ծառայություններ» ծրագրի
մասին» որոշման նախագիծը:

Չենք առարկում ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքով՝

Ա. Գեղեցիկյան

Հ. Արշակյան
/0312/3-16-26

116/2850-11
4.02.2011թ.



« ԱՌԴԱ » առողջապահական եւ աջակցման կենտրոն
բարեգործական Հիմնադրամ
ARDA Health & Resource Center
Humanitarian Foundation

ՀՀ ք.Գյումրի – Մ. Խորենացի 19
հեռ. 0312 / 3-06-85

«10» փետրվարի 2011 թ.
№ Ա-10/02

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման համեմատողի մախազահ
պրն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Տեր-Սիմոնյան,


Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների մախարարության
2011 թվականի փետրվարի 8-ի N 3/3.8-1/1029-11 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր եկամուտների պետական կոմիտեի 2011 թվականի
փետրվարի 7-ի N ԱԱ/3-4/584-11 գրություններում արված դիտողությունները ծրագրի
մեջ կատարել ենք համապատասխան փոփոխություն:

Ուղարկում ենք ծրագրի լրամշակված տարբերակը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքներով՝

Ա. Դարբինյան
տնօրեն



Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համեմատողի «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն»
բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հիմնական ծառայություններ» ծրագրի մասին» որոշման նախագծի
կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ	Հաշվի է առնվել, ծրագիրը լրամշակվել է:
Ծրագրի 9-րդ կետում միջոցառումների ֆինանսական ծավալի հանրագումարը չի համապատասխանում 6-րդ կետում նշված ծրագրի բյուջեին, իսկ 10-րդ կետում անհավասարակշռված չէ ներմուծվող բեռները	
ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ	Դիտողությունն անհասկանալի է:
Ծրագրի 7-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրա- ժեշտ է հստակ նշել բարեգործություն ստացողներին	
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ	
Ծրագրի 9-րդ կետի միջոցառումների համար նախատեսված ծախսերի հանրագումարը կազմում է 217.5 մլն դրամ, որը զգալիորեն գերազանցում է ծրագրի 6-րդ կետում նշված ընդհանուր բյուջեն: Ելելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ճշտել նշված արժեքային անհամապատասխանությունը	Հաշվի է առնվել, ծրագիրը լրամշակվել է:

2/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

— փետրվարի 2011 թվականի N Մ - -Ա
քաղ. երևան

2/20

«ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐԻ-ԱՌԴԱ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի -ի N 3/3.8-1/-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի փետրվարի -ի N -11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի -ի N ԱԱ/3-4/-11 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի -ի N եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) իրականացվող՝ 127.5 մլն դրամ ընդհանուր արժողությամբ «Գյումրի-ԱՌԴԱ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայրուսազարդ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2006 թվականի ապրիլի 10-ին կնքված՝ N 02204061363 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի ընթացքում բնական գազի մատակարարում՝ 400000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

